




Տ. ՎԱԶԵ Ծ. ՎՐԴ. ԻԳՆԱՏԻՈՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(18 հոկտեմբերի 1992 թ.)

«Հոգի Տեառն ի վերայ իմ,
վասն որոյ էօծ զիս,
Աւետարանել աղքատաց առաքեաց զիս
Բժշկել զբեկեալս սրտի» (Ղուկ. Դ. 18)

Արդարև, այս օրուան կարդացուած ճաշու Աւետարանը Ղուկասու Աւետարանի այն գեղեցիկ հատուածներէն մէկն է, որ ամբողջ Աւետարանին բովանդակութիւնն ու էութիւնը կը կազմէ: Եւ կը սկսի այսպէս.—

«Եւ Յիսուս հոգիի զօրութեամբ Գալիլիա վերադարձաւ և անոր համբար՝ այն գաւառին ամէն կողմերը տարածուեցաւ: Եւ ինք հրեաներու աղօթավայրերուն մէջ կը սորվեցնէր, եւ ամենէն կը փառաւորուէր»:

«Եւ եկաւ Նազարէթ, ուր ինք մեծցած էր, եւ իր սովորութեան պէս, շաբաթ օրը մտաւ աղօթավայրը: Եւ ելաւ, որ կարդայ՝ Իրեն տուին Եսայի մարգարէին գիրքը: Եւ երբ գիրքը բացաւ, գտաւ այն տեղը (ԿԱ. 1) ուր գրուած էր. Տիրոջ հոգին իմ վրաս է. «վասն զի զիս օծեց աղքատներուն Աւետարանը քարոզելու, Զիս ղրկեց կոտրած սիրտ ունեցողները բժշկելու, գերիներուն ազատութիւն եւ կոյրերուն տեսութիւն քարոզելու, Տիրոջ ընդունելու տարին քարոզելու» (Ղկ. Դ. 18—19):

Արդարև, եթէ առնենք իրաքանչիւր համարը եւ վերլուծենք, պիտի տեսնենք թէ որքան կը յարմարի մեր հայրենի աշխարհի այսօրուան հոգեւիճակին եւ գոյավիճակին:

Ա.—«Տիրոջ Հոգին իմ վրաս»

Արդարև, Իսրայելի ժողովուրդը դարերով սպասած էր խոստացեալ Մեւսիան, որուն մասին երգած էին շարունակ մարգարէները և այս կարդացուած մարգարէութիւնը կ'իրականանար Քրիստոսի անձով, որուն ծնունդը տեղի ունեցած էր Սբ. Հոգիի զօրութեամբ: Աւետման ատենը Գաբրիէլ հրեշտակապետը ատենց սբ. կոյսին թէ՛ Հոգին Սուրբ պիտի գայ քեզի և Բարձրելոյն զօրութիւնը քու վրայ հովանի պիտի ըլլայ: Ուստի այն, որ քեզ-

մէ ծնանելու է՝ Սուրբ Աստուծոյ Որդի պիտի ըստի» (Ղուկ. Ա. 35): Ինչպէս նաև մկրտութեան պահուն Սբ. Հոգին իջած էր աղանակերայ (Մաթ. Գ. 17):

70 տարիներ ետք, մեր հայրենիքի մէջ, Սբ. Հոգիի գօրութեամբ, Քրիստոս դարձեալ յայտնուեցաւ հաւատացեալներու մէջ:

Բ.—«Վասն զի զիս օծեց աղբատներուն Աւետարանը քարոզելու»:

Յիսուս միշտ նախապատուութիւնը տուած էր աղբատներուն քարոզելու: Ինչպէս նաև երանիներու առաջինն է. «Երանի հոգով աղբատներուն, վասն զի երկինքի թագաւորութիւնը անոնց է» (Մաթ. Ե. 3): Այս նախապատուութիւնը տրուած է աղբատներուն, որովհետև աղբատ դասակարգն է, որ անելի կը փնտռէ զԱստուած: Իսկ ընդհանրապէս տեսնուած է, որ հարուստ դասակարգը կշտացած ըլլալով կեանքի բարիքներէն, հեռացած է Աստուծմէ և ընկղմած է մեղքի, ապականութեան և անբարոյականութեան մէջ: Ապացոյց՝ մեր հայրենիքի ժողովուրդի մէջ մեծ արթնութիւն մը տեղի կ'ունենայ, մարդիկ ծարաւ են և Աստուծոյ ճշմարիտ խոսքով կ'ուզեն կշտանալ: Դժբախտաբար սակայն այս գոյավիճակէն օգտուելով շատ մը աղանդաւորներ մեր հայրենիքը արշաւելով՝ մոլորեցուցած են շատերը մեր Առաքելական լոյս հաւատքէն: Անոնք հարուստ երկիրներէն գալով՝ իրենց տոլարներով մարդորսութիւն կ'ընեն և իրենց մոլար վարդապետութեան կ'առաջնորդեն: Հայ Առաքելական Եկեղեցոյ վարդապետութիւնը հիմնուած է Աստուածաշնչի հաւատքի և վարդապետութեան վրայ:

Արդ՝ մի խաբուիք անոնցմէ, և մի հետևիք այդ աղանդաւորներու ճամբուն: Յովհաննէս Առաքեալի պէս կ'ըսես՝ ձեզի. «Զանոնք տուններնիդ մի ընդունիք, և անոնց բարև մի ըսէք: Որովհետև ով որ անոնց բարև կ'ըսէ անոնց չար գործերուն հաղորդ կ'ըլլայ (Բ. Յովհ. 10):

Գ.—Զիս ղրկեց կոտրած սիրտ ունեցողները բժշկելու:

Արդարև, այս համարը որքան կը նմանի մեր հայրենիքի ժողովուրդին այսօրուան հոգեվիճակին: Լեռնականի այդ ահաւոր երկրաշարժը հազարաւոր զոհեր խլեց և ոչ միայն մեր հայրենիքը ահ ու սարսափի մատնեց, այլև ամբողջ աշխարհը ցնցեց: Ամբողջ հայ ժողովուրդին սիրտն ու հոգին կոտրեց, իսկ այսօր ալ Ղարաբաղի զոհերն ու նահատակները մեր սիրտը կ'արհւնեն: Դժբախտաբար օտար մեծ պետութիւններէ կան միայն հոգեշահ խօսքեր: Արդ՝ մեր պայքարը Ղարաբաղի մէջ կը նմանի Դաւիթի եւ Գողիաթի պատմութեան: Ինչպէս պատանի Դաւիթը միմիայն Աստուծոյ ապաւինելով՝ յաղթեց ու տապալեց հսկայ զրահաւոր Գողիաթը, մենք ալ միմիայն Տիրոջ օգնութեան ապաւինելով՝ կրնանք յաղթահարել թշնամին: Որովհետև Տէրը մեզ չի խաբեր, քանի որ կը խոստանայ մեզի՝ կոտրած սիրտ ունեցողները բժշկելու: Ծնորհիւ այս օրուան հոգևոր արթնութեան, խաղաղութիւն պիտի պարգևէ մեզի: Ինչպէս պարգևած էր Առաքեալներուն վերջին ընթրիքին: Երբ իր Աշակերտներուն սիրտն ու հոգին խոռոված էր:

«Խաղաղութիւն կը թողում ձեզի, իմ խաղաղութիւնս կու տամ ձեզի» (Յովհ. ԺԴ. 27):

Ինչպէս Տէրը ըսած էր Իսրայէլի ժողովուրդին. «Երանի թէ իմ ժողովուրդը ինձի մտիկ ըներ, և Իսրայէլ իմ ճամբաներուս մէջ քալեր: Ծուտով պիտի խոնարհեցնեի անոնց թշնամիները, և ձեռքս պիտի դարձնեի անոնց նեղիչներուն վրայ» (Սղմ. ՂԱ. 13—14):

Ահաւասիկ ժամն է, որ դառնանք մեր պապերու լոյս հաւատքին, որպէսզի անով մեր ազատութիւնն ու փրկութիւնը ստանանք:

Դ.—«Գերիներուն ազատութիւն և կոյրերուն տեսութիւն քարոզելու, Տիրոջ ընդունելու տարին քարոզելու»:

Այսօր մեր հայ ժողովուրդը ազատագրուած է 70 տարիներէ ետք, երբ գերի մնացած էր անաստուածութեան ճիրաններուն մէջ: Անոնք կործանեցին մարդոց հաւատքը, երկու հազարէ աւելի եկեղեցիներ, վանքեր կողուտեցին, թալանեցին, քանդեցին ու այրեցին: Անոնք կործանեցին մարդոց հաւատքը: Բազմաթիւ հաւատացեալներ Սիպերիա աքսորեցին, մէկ խոսքով՝ քրիստոնէութեան տեղ անաստուած կայսրութիւն մը հիմնեցին, որ տևեց 70 տարիներ, հրեական բաբելոնեան 70 տարիներու նման: Այսօր փառք Ամենակալին, որ հայ ժողովուրդը ազատուելով այդ գերութենէ կը պաշտէն Քրիստոս ճշմարիտ Աստուածը: Քրիստոսի լոյսով կը սորվին ճշմարտութիւնները (Յովհ. Թ. 39): Բայց դժբախտաբար հազիւ գաղափարախօսական գերութենէն ձերբազատուած՝ մեր հաւատացեալներէն ոմանք ինկած են աղանդատրներու ցանցին մէջ: Ասոր համար մեր երկու իմաստուն կաթողիկոսները՝ Վազգէն Ա. Ամենայն Հայոցը և Գարեգին Բ. Մեծի Տանն Կիլիկիոյ, գրեցին «Հայրական խոսք՝ հայ ժողովրդին»: Մեր Վեհափառ Հայրապետ 37 տարիներէ ի վեր իմաստութեամբ առաջնորդեց մեր Հայ Եկեղեցին իր ամենէն դժուարին և փոթորկալից օրերուն մէջէն, մեծ նաւաւարի նման: Փառք Ամենակալին Աստուծոյ, որ պահեց և պահպանեց մեր Սբ. Էջմիածին Մայր Աթոռը և անոր վեհ գահակալը և մեզ հասցուց Տիրոջ ընդունելու տարին հռչակելու և հիմնելու ազատ ու անկախ քրիստոնէական մեր հանրապետութիւնը: Միշտ հաւատարիմ մնանք մեր Սբ. Էջմիածնին և մեր անկախ հանրապետութեան. Ամէն:

